ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների մեջ ինքնուրույնության,նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում »

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական դասարանների ուսուցիչ

ՀԵՂԻՆԱԿ՝ Գոհար Եփրեմյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ Սյունիքի մարզ Անգեղակոթի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

Անգեղակոթ 2023

Բովանդակություն

Բովանդակություն……1

Ներածություն……..2

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը մայրենիի դասավանդման ընթացքում……..4

4. Ուսուցման բոպեներ _ 18

5. Ստեղծագործական երևակայության զարգացման ուղիներ _ _ _ 22

6. Ուսուցման պլանավորման չորս կարևոր հարցերը _ _ _ _ _ _ _ _ 24

7. Եզրակացություն _27

8. Օգտագործված գրականություն _29

Ներածություն

Իրագործում ենք բազում մեթոդներ,
Ներգրավելով տարբեր ունակություններով աշակերտներ։
Քաղում են նրանք ամեն մի նյութից
Նորանոր մտքեր ու հմտություններ։
Ունակությունների հսկա պաշարը,
Հաբունիների ուղղորդող դասը,
Ուրույն ստեղծագործելու հմտությունները,
Յուրաքանչյուր աշակերտի զարգացման ընթացքը,
Նոր ՀՊՉ-ի ակունքն է դառնում։
Ուսուցիչների հմուտ մոտեցումը,
Թեթև ու ճկուն են դարձնում ինքնազարգացումը։
Յուրովի նախաձեռնված աշխատանքը
Ուրիշ աշխարհ է տանում մանկանը,
Ներքաշելով նրան գիտության անդաստանը
Լինել նածխաձեռնո՛ղ,նորարա՛ր,կոմպետե՛նտ,ունենալ ճկուն մի՛տք,ստեղծագործ հոգի՛…

Միայն այս դաստիարակությամբ և հոգեբանությամբ լցված, վաղվա քաղաքացին, այսօրվա սանը, կկարողանա ոտքի կանգնեցնել մեր հանրապետությանը, կկարողանա լուսավորել վաղվա օրն ու ապագան: Իսկ դրան հասնելու համար, մեծ է մեր՝ուսուցիչներիս առջև դրված պարտականություններն ու պահանջները: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ դասից դաս,դասարանից դասարան Սա նշանակում է, որ տարրական ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները պիտի համապատասխանեցվեն կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններին, նրանց ճանաչողական հետաքրքրություններին, ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների և

ձևավորման նպատակներին: Իմ փորձը ցույց է տալիս , որ երեխաները պետք է ինքնուրույն աշխատեն, իսկ մենք պետք է վերահսկենք այդ աշխատանքը և նյութ տրամադրենք նրանց: Ուսուցիչներս, փնտրում ենք սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման որոշ ուղիներ ու միջոցներ՝ հաշվի առնելով ուսուցման տարիքային շրջանները: Մանկավարժական գործընթացում զգալի տեղ են գրավում ինքնուրույն աշխատանքի մեթոդները: Ինքնուրույն աշխատանքը պայմաններ է ստեղծում սովորողների մտածողության խորը տիրապետման և զարգացման համար: Ինքնուրույն աշխատանքը պահանջում է ինտենսիվ մտածողություն, տարբեր ճանաչողական առաջադրանքների լուծում, նշումներ կատարելը, ուսումնական տեղեկատվության ըմբռնումն ու մտապահումը և այլն:

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը մայրենիի դասավանդման ընթացքում

Վերջին տասնամյակներում հասարակության մեջ տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ՝ կապված կրթության նպատակների և դրանց իրականացման ուղիների հետ: Կրթության նպատակն է դարձնել աշակերտի ընդհանուր մշակութային, անձնային և ճանաչողական զարգացումը, որը կապահովի նրա սովորել սովորելու կարողությունը: Հետևաբար, կրթության ժամանակակից նպատակների իրականացման համար ուսուցիչը պետք է փնտրի և գործադրի աշակերտների հետ աշխատանքի նոր մոտեցումներ:

Տարրական դասարանների ուսուցիչները պետք է ուշադիր լինեն դասի պլանավորման նոր մոտեցումներին, որոնք նպատակ ունեն առավել արդյունավետ և որակյալ դարձնելու առարկայի դասավանդումը, ապահովելու առարկայական չափորոշիչներով և ծրագրային պահանջներով ծրագրված արդյունքները:

Դասը ուսումնական գործընթացի հիմնական բաղկացուցիչ տարրն է: Ուսուցչի և աշակերտների ուսումնական գործունեությունը հիմնականում կենտրոնանում է դասի վրա: Դրա համար էլ մեծ մասամբ աշակերտի պատրաստվածությունը այս կամ այն առարկայից որոշվում է դասի անցկացման մակարդակով: Որպեսզի այդ մակարդակը լինի բավարար չափով բարձր, անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասին նախապատրաստվելիս աշխատի այն պլանավորել իբրև իր հարուստ մտահղացումներով մի ինքնատիպ ստեղծագործություն՝ յուրահատուկ նախաբանով, հանգույցով և լուծումներով, ինչպես բնորոշ է ցանկացած գեղարվեստական ստեղծագործության: Շատ կարևոր է գիտակցել, որ ուսուցումը ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունն է՝ հիմնված համագործակցության և փոխըմբռնման սկզբունքների վրա: «Ուսուցիչ-աշակերտ» համակարգը իր հաջողությունները կգրանցի այն դեպքում, երբ կկայանա գործողությունների համաձայնություն, ուսուցչի և աշակերտի նպատակամետ գործողությունների համապատասխանություն, որը կխթանի աշակերտների ճանաչողական ակտիվությունը, հետազոտական գործունեությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնությունը, ստեղծագործելու

ունակությունը: Ուսուցիչը պետք է նախապես որոշի դասի ուսուցողական, զարգացնող և դաստիարակչական նպատակները:

Ինչպես նախապատրաստել դասը.

- Պլանավորել ուսումնական նյութը
    - Ընտրել թեմային համապատասխան գրականություն և ամբողջ նյութից ընտրել միայն այն հատվածները, որոնք առավել պարզ եղանակով կօգնեն լուծելու առաջադրված խնդիրը:
    - Ընտրել ուսումնական այն առաջադրանքները, որոնց նպատակն է՝

նոր նյութի իմացություն,

վերարտադրություն,

գիտելիքների գործադրում նոր իրավիճակում,

գիտելիքների գործադրում անծանոթ իրավիճակում,

ստեղծագործական մոտեցում գիտելիքներին:

- Համակարգել ուսումնական առաջադրանքները պարզից բարդ սկզբունքով: Կազմել առաջադրանքների 3 խումբ.

առաջադրանքներ, որոնք կուղղորդեն աշակերտին վերարտադրելու նյութը,

առաջադրանքներ, որոնք կնպաստեն նյութի իմաստավորմանը,

առաջադրանքներ, որոնք կնպաստեն նյութի ամրապնդմանը:

- Մտածել դասի «Բանալի հարցի» մասին:

Յուրաքանչյուր դաս պետք է ունենա հիշարժան պահ, որը երկարատև մնա սովորողի հիշողության մեջ: Դա կարող է լինել զարմանք, հիացում, ոգևորություն, հետաքրքիր փաստ, անակնկալ բացահայտում, գեղեցիկ փորձ, ծանոթ երևույթի վերաբերյալ ոչ ստանդարտ մոտեցում և այլն:

3. Խմբավորել ընտրված ուսումնական նյութը: Անհրաժեշտ է մտածել, թե ընտրված նյութի շուրջ աշխատանքը ինչ հերթականությամբ պետք է կազմակերպել, ինչպես իրականացնել սովորողի ուսումնական գործունեության տեսակների հերթագայումը: Նյութերի խմբավորման հարցում կարևոր է ընտրել դասի կազմակերպման այնպիսի

ձև, որը կնպաստի սովորողների գործունեության բարձրացմանը, ոչ թե նյութի պասիվ յուրացմանը:

4. Պլանավորել սովորողների գործունեության վերահսկումը: Սովորողների ուսումնական գործունեության արդյունավետ վերահսկման համար անհրաժեշտ է մտածել՝

ինչը վերահսկել,

ինչպես վերահսկել,

ինչպես օգտագործել վերահսկման արդյունքները:

Միաժամանակ չպետք է մոռանալ, որ որքան հաճախ է վերահսկվում բոլորի աշխատանքը, այնքան հեշտ է տեսնել տիպական սխալներն ու դժվարությունները, բացի այդ՝ դա հիանալի միջոց է դրսևորելու ուսուցչի իրական հետաքրքրությունը յուրաքանչյուրի աշխատանքի նկատմամբ:

5. Նախապատրաստել դասի կահավորանքը: Կազմել անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաների ցանկը: Հոգալ էլեկտրոնային դասերի ստեղծման մասին, ամբողջ նոր տեղեկատվությունը տեղադրել այնպես, որ այն ծառայի իբրև հենակետային նյութ՝ այն մտապահելու և ամրակայելու նպատակով:

6. Որոշել տնային հանձնարարությունը՝ դրա բովանդակության մեջ նկատի ունենալով աշակերտական տարբեր խմբեր: Դա նշանակում է շերտավորել նաև տնային հանձնարարությունը՝ չմոռանալով տալ հանձնարարականներ դրանց կատարման վերաբերյալ:

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ զարգացնելու համար շատ կարևոր է դասի համապատասխանեցումը: Դասի համապատասխանեցումը շատ հետաքրքիր է և շատ անհրաժեշտ գիտական տեսություն է: Սա տարբերակված ուսումնառության շարունակությունն է, որը յուրաքանչյուր առաջատար երկրի ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչ է: Այս թեման ավելի նպատակալից է և ցուցմունքներ է տալիս տարբեր գործիքների կիրառությամբ հասնել նպատակին:

Տարբերակումը նշանակում է տալ ցուցումներ, որոնք անհատական կարիքները կբավարարեն:

Այսինքն ուսուցիչը պետք է կարողանա որոշել, թե ուսումնառության քանի տարբեր մակարդակների նա պետք է անդրադառնա, որպեսզի կարողանա օգնել բոլորին /տարբեր մակարդակներում/ հասկանալ և հասնել վերջնարդյունքին:

Տարբերակված ուսուցում իրականացնելու համար, պետք է սկսել փոքր քայլերից: Այն է՝ թույլ տալ սաներին ընտրել ուսումնառության ձևը /այսինքն՝ ինքը որոշի, թե ինչպես է ցանկանում ներկայացնել տվյալ նյութը՝ բանավո՞ր, թե՞ գրավոր, որն է իրեն ավելի հոգեհարազատ, որն է իր մոտ ավելի լավ ստացվում:

Քանի որ դասարանում ունենք երեք մակարդակի աշակերտներ, պետք է տարբերակել երեք տեսակի նյութեր, կամ գործընթացներ, երեք տեսակի աշակերտներին համապատասխանեցնելու համար:

Ավելի բարդ մոտեցում է ամբողջական դասի կմախք ստեղծելը: Ուսուցիչն է ընտրում դասը, թեման կամ համապատասխանող չափորոշիչը: Դրանից հետո ուսուցիչը որոշում է, թե ուսումնառության քանի տարբեր մակարդակների նա պետք է անդրադառնա:

Դասարանի կարգավորման մասին

Դասը սկսելուց առաջ պետք է սաներին տրամադրել դասի նպատակը, ցույց տալ որտեղից ուր են գնալու /ներկայացնել վերջնարդյունքները/
Տրամադրել կազմակերպչական ռազմավարություններ
Միշտ սաներին հիշեցնել վերջնաժամկետները
Նստել դժվարացող սաների մոտ
Գնահատել ոչ թե ամեն դասին սովորողի տված պատասխանը, այլ ամբողջ թեմայի յուրացումը

Յուրաքանչյուր շաբաթ կառուցողական հետադարձ կապ տալ:

Ներկայացնում եմ մի քանի օրվա դասի պլաններ

Դասի պլաններ(Մայրենի,Մաթեմատիկա,Ես և շրջակա աշխարհ)

Դասի պլան 1

Առարկան՝**Մայրենի**

Դասարան՝3-րդ,1-ին կիսամյակ

Թեմա՝«Ես աշունն եմ սիրում»:Բառակապակցություն

Դասի տիպը՝Նոր նյութի ուսուցում

Նպատակը՝

ա)գիտելիքներ

.նոր բառերի և բառիմաստների բացատրություն

.նկարագրել տարվա եղանակները

.նշել աշնան առանձնահատկությունները ,գույները

.առանձնացնել բառակապակցությունները

բ)կարողություններ և հմտություններ

.սահուն և արտահայտիչ ընթերցել եւ արտասանելվերաբերմունք բանաստեղծությունը

.կարծիք հայտնել վերնագրի մասին և նոր վերնագիր առաջարկել

. հորինել հանելուկ աշնան մասին

.կառուցել նկարագրական խոսք

.գրել քառյակ, կամ ակրոստիկոս

գ) արժեքային համակարգ

. վերաբերմունք դրսևորել հայրենի բնության նկատմամբ

.հնարներ փնտրել ձմեռող թռչուններին օգնելու համար

դ) վերջնարդյունք

.աշակերտը կկարողանա.

.նկարագրել աշունը իր հրաշք գույներով

.քամու կախարդական պարը տերևների հետ

.աշնան բերք ու բարիքը, լիությունն ու առատությունը

.հորդացած ատվակի նոր երգը

.կկազմի գոյական + ածական բառակապակցություններ

.առյականը կփոփոխի տարբոր ձևերով(գարուն,ամառ ձմեռ,թոռ,ձուկ)

Խաչվող հասկացություններ

.օրինաչափություն(ի՞նչ ենք նկատում)

.պատճառ և հետևանք(ի՞նչ տեղի ունեցավ)

Միջառարկայական կապեր

.շրջակա աշխարհ-բնության փոձոխությունները

.տեխնոլոգիա-տերևներով ապլիկացիա

.երաժշտություն-երգեր աշնան մասին(Վիվլդի՝«Տարվա եղանակները»)

Դասի ընթացքը.

Խթանում

.առաջարկել հանելուկ(հորինված)

Տարին արդեն ծերացել,դեղնահեր է դարձել,

Ծառը բեռներից ազատվել,տերևնեևը քամուն է տվել

Գիժ առվակը հորդացել,իր նոր երգն է հորինել. . . .

Բնությոան հետ այս ի՞նչ է կատարվել

(Աշուն է եկել)

Իմաստի ընկալում.

Պարզել թե, ինչ փոփոխություններ են տեղի ունենում աշնանը (խմբային աշխատանք)

1-ին խումբ
Նկարագրել կախարդական աշունը։
2-րդ խումբ
Կենդանիները նախապատրաստվում են ձմռանը։
3-րդ խումբ
Թռչունները աշնանը

Խմբերը աշխատանքները ներկայացնելուց հետո անդրադառնում են ք նոր նյութի ուսուցմանը։

- Համեմատել խմբային աշխատանքը դասի բովանդակության հետ։
- Գտնել նմանություններն ու տարբերությունները։

Բառային աշխատանք

- Առանձնացնել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերը,դրանցով կազմել բառակապակցություններ։
- Իմաստային դժվարություն ներկայացնող բառեր(բացատրել կազմությունները,գտնել հոմանիշները և հականիշները)։
- Առանձնացնել բառակապակցությունները <դրանցով կազմել նախադասություններ։
- Բաղադրյալ բառակապակցությունները ասել մեկ բառով։

Կշռադատում

- Նոր վերնագրեր առաջարկել
- Նկարագրել սեփական բնակավայրի աշունը համեմատել բնագր հետ:
- Կիրառել **Քառաբաժան** մեթոդը

Ի՞նչ ձայներ էի լսում	Ի՞նչ էի տեսնում
Ի՞ նչ էի զգում	Ի՞նչ է հիշում

Դասի ամփոփում

- Թվարկել աշնանա ամիսները
- Ի՞նչ փոփոխություններ են կատարվում աշնանը
- Ի՞նչով է գեղեցիկ աշունը
- Ինչու եմ սիրում աշունը

Տնային աշխատանքի հանձնարարում

Դասը ՝ 1-ին դ/ժ կարդալ ,պատմել,գրել ակրոստիկոս

2-րդ դ/ժ անգիր,բառերի գանձատուփ

Դասի պլան 2

Առարկա՝ Մաթեմատիկա

Դասարան՝3-րդ

Թեմա՝Թայկական և հռոմեական թվագրության համակարգեր 3դ/ժ

- . առաջադրանք՝81-108
- . դաս՝14,15,16
- . էջ՝23-28

Օգտագործվոզ նյութեր՝կպչուն թղթեր,ծղոտե ձողիկներ,լուցկու հատիկներ

Նպատակը.

- Ճանաչի,կարողանա գրել,կարդալ հռոմեական թվերը։
- Իմանա ,թե ինչպես են կազմվում հռոմեական թվերը։
- Իմանա յուրաքանչյուր թվի համաժեք հայկական տառը։
- Կարողանա գումարել և հանել հայկական տառերի և հռոմեական թվանշանների միջոցով։
- Կարողանա քանակական թվականները դարձնել դասական և ճիշտ գրել։

Դասի Վերջնարդյունքները

- Կճանաչի և կկարողանա գրել ,կարդալ հռոմեական թվերը։
- Կիմանա յուրաքանչյուր հռոմեական թվի համարժեք հայկական տառը։
- Կկարողան գումարել և հանել հռոմեական և հայկական թվերը։

- Կկարողանա քանակական թվերը դարձնել դասական և ճիշտ գրել։

Խաչվող հասկացությունները

- Պատճառ և հետևանք
- Կառուցվածք և գործառույթ

Միջառարկայական կապեր

Մայրենի՝

- Դասական թվականների կազմությունն ու գրությունը(առաջին ,երկրորդ ,իններրորդ ,երրորդ,չորրորդ ,տասներորդ):
- Գրագետ և ճիշտ խոսել մաթեմատիկական լեզվով։

Տեխնոլոգիա՝

Պատրաստել ծղոտե ձողեր՝ հռոմեական թվեր <<գրելու>> համար։

Դասի ընթացք

- **Բանավոր հաշիվ**
- Ասել միանիշ թվերը և գրել գրատախտակին
- Թվարկել դպրոցի դասարանների քանակը
- Ում քույրը կամ եղբայրը որերորդ դասարանում է սովորում
- Ում սեղանը որերորդ շարքում է գտնվում

(5րոպե)

- **Նոր նյութի հաղորդում**

Պաստառի վրա գրել

Հնդկական	1**********10
Հռոմեական	I**********X
Հայկական	Ա**********Ժ

Ի՞նչ նմանություն ենք տեսնում

Ի՞նչ օրինաչափություն ենք նկատում

- Բնական թվերը սկսում են մեկից
- Երեխան գալիս է առաջին դասարան
- Ա-ն այբուբենի առաջին տառն է

(10 րոպե)

- Գաղափար տալ թվի գրության դիրքային կամ տասնական համակարգի մասին։
  - Թվագրության հայկական համակարգը

ԲԳ = Ե	ԶԹ=ԺԵ
Բ =2,Գ= 3	Զ=6,Թ=9
2+3=5	6+9=15
5=Ե	10=Ժ,5=Ե

1-Ա	10-Ժ	100-Ճ	1000-Ռ
*****	******	*****	******
******	******	******	*****
9-Թ	90-Ղ	900-Ջ	9000-Ք

Միավորներ Տասնավորներ Հարյուրավորներ Հազարավորներ

- Թվագրության հռոմեական համակարգ

I- առաջին	L-50
II-երկրորդ	C-100
III- երրորդ	D-500
X-տասներորդ	M-1000

Ինչպես է կազմվում

IX=9 XI=11 XL=40

1+9 10+1=11 50-10=40

10-1=9

(15բոպե)

4. Ամրապնդելու նպատակով կատարել խմբային աշխատանք։

1-ին խումբ

Թվերը տեղադրել համապատասխան գրպանիկներում. 34,76,98,112,58,96,105,211



2-րդ խումբ

Գրառել թվերը հայկական թվագրության համակարգում

45 32 99 68

ՂԹ,ԿԸ,ԼԹ,ՂԸ,ԼԻ,ԽԵ,ԽԳ,ԿԵ

Իսկ այն թվերը ,որոնք չունեն համապատասխան գրպանիկներ ,ստեղծել նորերը։

Աշխատանք գրքով (8 բոպե)

Մաթեմատիկական թելադրություն՝ գրել 215,368 թվերը հռոմեական նշաններով(2 բոպե):

Ամփոփում,տնային առաջադրանքի հանձնարարում։

Առաջի օր -87(բ)

Երկրորդ օր- 91(բ),92 (գ,դ)

Երրորդ օր- 88(բ),102(բ)

Դասի պլան 3

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Դասարան՝ 3-րդ, 1-ին կիսամյակ

Թեմա՝ <<Տղաներ և աղջիկներ>>

Դասի տիպը՝ Նոր նյութի ուսուցում

Նպատակը՝

- Աշակերտը պետք է հասկանա, որ տղաների և աղջիկների տարբերությունները չեն հակասում միմյանց, այլ լրացնում են իրար:
- Պետք է հասկանա, որ կատարած գործն ավելի արդյունավետ կլինի, եթե համագործակցեն իրար հետ:

Վերջնարդյունքը՝

Հասնել այն բանին, որ երեխաները հասկանան.

- Տղա ես, թե աղջիկ, կարևոր չէ. պետք է լինել քաղաքավարի, բարեկիրթ, բարի և արդարամիտ մարդ:
- Աշխատանքը պետք չէ բաժանել տղաների կամ աղջիկների:

- Կան խաղալիքներ, որոնցով խաղում են միայն աղջիկները, որոշներով էլ՝ միայն տղաները:

Խաչվող հասկացություններ՝

Պատճառ-հետևանք (ի՞նչ տեղի ունեցավ, ի՞նչը ստիպեց, որ տեղի ունենա), Կառուցվածք և գործառույթ:

Դասն արդյունավետ անցկացնելու համար երեխաներին բաժանում ենք քարտեր, որոնց վրա գրված են.

- Դասարանի տղաներն ու աղջիկները միասին են խաղո՞ւմ, թե՞ առանձին:
- Աղջիկների խաղն է հետաքրքի՞ր, թե՞ տղաների:
- Ո՞րն է տղաների գործը, ո՞րը աղջիկների:
- Կ՞ան գործեր, որ տղաների կարծիքով աղջկա են, և իրենք չեն անի:
- Աղջիկների կարծիքով, որ գործը պետք է անեն տղաները:

Լրացնելուց հետո կանցնենք նոր նյութի յուրացմանը:

Նյութն ամբողջությամբ յուրացնելուց հետո կանդրադառնանք աղյուսակին և կհամեմատենք գործերը: Կդիտեն նկարը և կորոշեն, թե ո՞ր պատկերն է ճիշտ և ինչո՞ւ:

Տնային աշխատանք՝

Ինչով եմ օգնում մայրիկիս, հայրիկիս, տատիկիս, պապիկիս:

Ուսուցման դրպեներ

Ուսուցման դրպեները չպլանավորված հնարավորություն է, որն առաջանում է դասարանում, երբ ուսուցիչը իդեալական հնարավորություն ունի իր աշակերտներին

ավելին առաջարկելու: Ուսուցման բոպեները այն չէ, ինչ որ Դուք կարող եք պլանավորել. այլ անցողիկ հնարավորություն է, որը պետք է ուսուցիչը զգա և բռնի պահը: Դա ուսումնական հատված են, որտեղ սաները ամբողջությամբ ներգրավված են: Այդ բոպեները հազվադեպ են լինում, դրանք հատուկ փորձառություններ են, որոնք սաները հիշում են ողջ կյանքի ընթացքում:

Այսինքն այն պահն է, երբ աշակերտի մոտ հետաքրքրություն է առաջանում և տպավորվում են նրա մոտ այդ պահերը:

Բեն. Ֆրանկլինը (և հին չինական ասացվածքը) ասում են.

«Ասա՛ ինձ, և ես կմոռանամ,

Սովորեցրու՛ ինձ, և ես կհիշեմ,

Ներառի՛ր ինձ, և ես կսովորեմ»:

Հանրակրթության բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը և տրամաբանությունը պայմանավորում են ինչպես ուսումնական նոր ծրագրերի ու դասագրքերի, այնպես էլ ուսուցման կազմակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Հանրակրթության բարեփոխման գործընթացում այսօր կարևորագույն հիմնախնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի և ընթերցողական հմտությունների ցածր մակարդակը, ինչի արդյունքում դրանից բխող խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման և ուսումնառության ընթացքում: Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային

անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:

Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պիտի կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունքներ:

«Ընթերցանության օգտավետության մասին» զրույցում ժամանակակից փիլիսոփա Անդրեյ Բաումեյստեյրը նշում է. «Տեսողական ինֆորմացիան ուղեղը պասիվ է ընկալում, այն վերլուծական հմտություն չի պահանջում: Ինչպես գիտենք, տեքստը սիմվոլների հավաքածու է. երբ կարդում ենք տեքստը, ըստ էության, մեր ուղեղը վերծանում է այն. տառերից՝ բառ, բառերից՝ նախադասություն, որից հետո մենք կարդացածը իմաստավորում ենք, ինչի հետևանքով ուղեղը ահռելի ակտիվ աշխատանք է կատարում, ինչը մղում է ուղեղի զարգացման, հետևաբար՝ մարդու զարգացման: Որքան էլ ընթերցումը համարեն հնացած սովորություն, տեղեկություն ստանալու աղբյուրներ դիտարկվեն տեսանյութը, ձայնագրությունները, համացանցը, միևնույնն է, ընթերցանությունը ուղեղը մարզելու, կոփելու եզակի, լավագույն միջոցներից է»:

Ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական, կարողություններ զարգացնելու միջոց է, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից:

Սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման դասարանային և արտադասարանային աշխատանքները պետք է հանգամանորեն պլանավորվեն, իրագործվեն հետևողականորեն, ունենան աստիճանական ձևով զարգացող բնույթ և փոխլրացնեն իրար:

Ծրագրի նպատակները

1. Հանրակրթության տարրական աստիճանում սովորողների ընթերցանության որակի բարելավում:

2. Սովորողների մեջ ընթերցողական և լեզվական գրագիտության կարողունակությունների ձևավորում և զարգացում:

3. Ընթերցանության և խոսքի մշակույթի որակի բարելավմամբ հանրակրթական բոլոր առարկաների յուրացման արդյունավետության բարձրացում:

4. Ազգային և համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների ընթերցանության միջոցով համամարդկային ու ազգային արժեքների դաստիարակում:

Ակնկալվող վերջնարդյունքները

Տարրական դպրոցում ընթերցանության որակի բարձրացման հիմք են «Հանրակրթության պետական չափորոշչում» ամրագրված հետևյալ պահանջները.

Տարրական դպրոցի սովորողը պետք է կարողանա՝

1. լսել, հասկանալ իրեն ուղղված խոսքը, համապատասխան արձագանք տալ լսածին՝ արտահայտելով իր կարծիքը կամ վերաբերմունքը.

2. հասկանալով և արտահայտիչ ընթերցել արձակ և չափածո գրական տեքստեր, արտահայտել մտքեր ենթատեքստի, հերոսների, նրանց մտքերի, խոսքի, արարքների վերաբերյալ՝ կիրառելով տեքստի բառերն ու արտահայտությունները.

3. ձևակերպել հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ, պատասխանել իրեն ուղղված հարցերին.

4. տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրել լսածը, ընթերցածը, դիտածը, նկարագրել տարաբնույթ երևույթներ, ցույց տալ դրանց փոխկապակցվածությունը

5. արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը, զգացումները, ցանկությունները, մասնակցել զրույցի և քննարկման, հանդես գալ փաստարկված խոսքով

6. արտահայտիչ արտասանել (կամ կարդալ) բանաստեղծություններ, արձակ հատվածներ, պատմել պատմություններ, հեքիաթներ, առակներ՝ շեշտադրելով հիմնական գաղափարը կամ ուղերձը և բացատրել՝ ինչպես է այն փոխանցվում տեքստի միջոցով

7. մի քանի նախադասությամբ գրել իր տպավորությունները և վերաբերմունքը ընթերցած ստեղծագործության, նկարի, երաժշտության, ներկայացման, կինոնկարի մասին, կազմել գովազդային հոլովակի պարզ տեքստ, հայտարարություն, հրավիրատոմս, բացիկ

8. իր հույզերն ու մտքերը արտահայտել ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, հասկանալ մարդուն, նրա հույզերը՝ հետևելով նրա շարժումներին, դեմքի արտահայտությանը, մարմնի դիրքին, դրսևորել համապատասխան վարքագիծ

9. ձևակերպել հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ, ուսումնասիրել տպագիր և էլեկտրոնային պաշարներ՝ հարցերի պատասխանները գտնելու նպատակով

10.հորինել պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (նկարապատում, ծաղրանկար և այլն), մասնակցել խմբային խոսք հորինելու գործընթացին

11.ըստ տեքստի ստեղծել պաստառ, գրքույկ, սահիկաշար և այլն:

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր վերջնարդյունքները միտված են սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Երևակայության զարգացումը ստեղծագործական, հետաքրքիր և մարտահրավեր գործընթաց է: Պատկերն ու միտքը անբաժանելի ամբողջություն են, և հենց մարդկային երևակայությունը կապված է առավել մտերիմ կապերով մտածողության հետ: Հետևաբար, մտածողության զարգացմանը միտված ցանկացած վարժություն կօգնի երևակայության ձևավորմանը: Ստեղծագործական երևակայությունը ենթադրում է նաև անկախ անհատականության կրթություն, որովհետև դա ենթադրում է նոր, ինքնատիպ, անօրինակ իրերի, պատկերների կամ նշանների ստեղծում:

Ստեղծագործական երևակայության զարգացման ուղիներ

վառ պատկերների կուտակում բնության հետ մտածված հաղորդակցության միջոցով և դիտումների արդյունքների ձայնագրում բանավոր ձևով, գծագրում

երևակայական «ճանապարհորդությունների» փորձ դեպի քարտեզներ գծերի սխեմատիկ ներկայացմամբ թաքնված վայրեր

գրքերի ուշադիր ընթերցում «սուզվելով» հերոսների արտաքին տեսքի նկարագրության մանրամասներում, ինտերիերում և լանդշաֆտներում՝ նպատակասլացությամբ ցանկանալով վերստեղծել այն հերոսները, որոնք նկարագրում են հեղինակները

ֆանտազիայի ձևավորումը խաղերում. դերախաղ, բառերով, առաջարկվող ֆանտաստիկ հանգամանքներով

Երևակայության խաղեր

Վաղ տարիքից իմաստ ունի ուշադրություն դարձնել երեխաների մոտ երևակայության զարգացմանը: Խաղային, զվարճալի միջոցն այստեղ ամենահարմարն է, օրինակ՝ առաջադրանք խաղերը

երկրային օբյեկների մասին հանելուկներ հորինել այլմոլորակայինների համար, ովքեր երբեք չեն լսել այդ օբյեկտների մասին և չեն տեսել դրանք

բանաստեղծություններ և հեքիաթներ ստեղծել կամայական թեմաներով

ֆանտաստիկ կենդանիների, բույսերի, քարերի նկարչություն և պատմությունների ստեղծում

ֆանտաստիկ ենթադրությունների խաղ՝ սկսած հարցից. Ի՞նչ կլիներ, եթե…

բառախաղ. ընտրում են մի բառ և դրա յուրաքանչյուր տառը դարձնում են նոր բառի սկիզբ, իսկ այնուհետև ստացված բառերից շարականներով շարում տողեր կամ դրանց հիման վրա պատմություններ կազմում:

Ուսուցիչները բացառիկ նշանակություն են տալիս դերային խաղերին, երբ դեր ստանձնելով՝ երեխաները ձգտում են հնարած պատկերների առավել ճշգրիտ նմանությանը իսկապես գոյություն ունեցող կերպարների հետ:

Կերպարվեստը ուղեկցվում է երեխայի պատմություններով և բացատրություններով: Այս ամենը տարածում է տալիս երեխայի երևակայությունը և զարգացնում գիտակցված մտածողություն:

Լավ ֆանտազիան աշխարհի լավագույն գործիքներից մեկն է հաջողության հասնելու համար: Ամենահաջողակ մարդիկ սովորաբար ստեղծագործ անհատներ են, և երևակայությունը կարևոր դեր է խաղում նրանց կյանքում:

Հաճախ թույլ տրվող սխալներից մեկն այն է, որ ուսուցիչները միանգամից աշակերտներին մղում են ինքնուրույն աշխատանքի կամ հակառակը՝ երբեք չեն հասնում ինքնուրույն աշխատանքի փուլին:

Ուսուցումը բաժանվում է չորս փուլի.

Առաջին փուլը կառուցվածքային փուլն է: Այս փուլում ուսուցումը ուսուցչակենտրոն է, քանի որ աշակերտները դեռևս գիտելիքներ չունեն թեմայի վերաբերյալ և ուսուցիչն է պլանավորում գործընթացը:

Երկրորդ փուլում ուսուցչի դերը նվազում, իսկ աշակերտների ինքնուրույն գործողությունների ծավալն աճում է: Այս փուլում աշակերտներն արդեն ինքնուրույն աշխատում են, բայց ուսուցիչը դեռևս վերահսկում է գործընթացը:

Երրորդ փուլում ուսուցիչն արդեն միայն ուղղորդող է, և անցում է կատարվում ուսուցման աշակերտակենտրոն փուլին:

Չորրորդ փուլում աշակերտները լիարժեք ինքնուրույն սովորողներ են, իսկ ուսուցիչը պարզապես հետևում է նրանց և անհրաժեշտության դեպքում աջակցում աշակերտներին:

Ուսուցման պլանավորման չորս կարևոր հարցերը

Մեկ այլ հետաքրքիր մոտեցում է հարցերի միջոցով ուսուցման փուլերի պլանավորումը: Ուսուցիչը պլանավորման գործընթացում պետք է պատասխանի 4 հարցի.

Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:

Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտները միասին:

Ի՞նչ պետք է անեն աշակերտները իրար հետ՝ առանց ուսուցչի միջնորդության:

Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն:

Այս հարցերին պատասխանելը հնարավորություն է տալիս պլանավորելու դասը, որի ընթացքում տեղի են ունենում ուսուցողական տարբեր գործընթացներ: Վերոնշյալը պարզ երևում է հետևյալ գծապատկերում:

Ուսուցչի պատասխանատվության չափաբաժինը



Աշակերտի պատասխանատվության չափաբաժինը

Ուսուցչի պատասխանատվության չափաբաժինը Նոր նյութի բացատրում Ուսուցիչն է անում Ուղղորդված ուսուցում Ուսուցիչն ու աշակերտները համատեղ են անում Համագործակցային աշխատանք Աշակերտները միասին են անում Ինքնուրույն աշխատանք Աշակերտն ինքնուրույն է անում Աշակերտի պատասխանատվության չափաբաժինը Դպրոցը պետք է ուրախություն պատճառի դպրոցականին: Դա պայմանավորված է ոչ միայն երեխաների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքով, այլ նաև հաջողակ կրթական գործունեության նկատմամբ հոգատարությամբ: Ուսուցչի խնդիրն է «բացել երեխայի սիրտը», արթնացնել նրա ցանկությունը՝ սովորելու նոր նյութ և սովորել աշխատել դրա հետ: Դրա համար ուսուցիչը պետք է լավ իմանա երեխաների հոգեբանական առանձնահատկությունները, կարողանա հասկանալ յուրաքանչյուր երեխայի անհատականությունը և գտնել ուսուցման և ճանաչողական մոտիվացիայի ձևավորման համապատասխան մեթոդներ, ինչպես նաև կազմակերպել սովորողների ինքնուրույն աշխատանքը:

Եզրակացություն

Եզրափակելով, ամփոփենք ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծագործական ունակությունների ձևավորման և զարգացման վերաբերյալ հիմնական եզրակացությունները: Իմ դասավանդման տարիների փորձը ցույց է տալիս ,որ անհնար է աշակերտներին սովորեցնել այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքում. հնարավոր է և անհրաժեշտ է սովորեցնել, թե ինչպես ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, կարողանալ դրանք կիրառել գործնականում, աշխատել գրքի հետ: Հայտնի է, որ գիտելիքը պետք է անընդհատ թարմացվի, դասին կարևոր է ոչ միայն և ոչ այնքան այն «փոխանցելը», այլ սովորել տեղեկատվություն քաղել տարբեր գրականությունից և, առաջին հերթին, դասագրքից ,ինչպես նաև օգտվեն և տիրապետեն արդի ՏՀՏ-ի տեխնոլոգիաներին:

Ուսուցումը ուսուցչի և սովորողի միջև փոխգործակցության գործընթացի կազմակերպման բարդ ձև է, որն ուղղված է որոշակի կրթական նպատակների իրականացմանը: Ուսուցումը ակտիվ գործընթաց է, որի ընթացքում ուսուցիչը և սովորողը լրացնում են միմյանց : Ուսուցման գործընթացում զգալի տեղ է զբաղեցնում ինքնուրույն աշխատանքը, որպես գործունեություն, որն իրականացվում է առանց ուսուցչի անմիջական մասնակցության, բայց նրա հանձնարարությամբ՝ դրա համար հատուկ հատկացված ժամանակում: Ինքնուրույն աշխատանքը սովորողների անձնական ստեղծագործական ձևավորման և զարգացման պայման է: Ուսումնական գործունեության ընթացքում կարևոր է, որ աշակերտները սովորեն ոչ միայն անգիր անել ուսուցչի ասածը, ոչ միայն սովորեն այն, ինչ ուսուցիչը բացատրում է իրենց, այլ իրենք ինքնուրույն կարողանան գիտելիքներ ձեռք բերել, կարևոր է, թե որքանով է աշակերտը ինքնուրույն յուրացման գործում: Այս կամ այն գործողության գիտակցված ընտրությունը բնութագրում է սովորողի ակտիվ մտավոր գործունեությունը, իսկ դրա իրականացումը նախաձեռնությունն ու վճռականությունն է: Ինքնուրույնության

բացակայությունը սովորողին դարձնում է պասիվ, արգելակում նրա մտածողության զարգացումը, ստեղծագործական միտքը, նախաձեռնությունը և, ի վերջո, անկարող է դարձնում ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար: Ինքնուրույն աշխատանք կատարելու գործընթացում սովորողների մոտ ձևավորվում է ուշադրություն, հիշողություն, իրենց վարկածներն ու ենթադրությունները հիմնավորելու ցանկությունը, նախաձեռնությունը: Ցանկացած ինքնուրույն աշխատանքի առանցքը խնդիր է, որը ծառայում է որպես սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեության սկիզբ: Որպես դիդակտիկ երևույթ՝ ինքնուրույն աշխատանքը, մի կողմից, դաստիարակչական խնդիր է, այսինքն. ինչ պետք է իրականացնի սովորողը, իր գործունեության առարկան, մյուս կողմից՝ համապատասխան գործունեության դրսևորման ձևը՝ հիշողություն, մտածողություն, ստեղծագործ երևակայություն, երբ սովորողը կատարում է ուսումնական առաջադրանք, որն ի վերջո տանում է սովորողին կամ ամբողջությամբ ձեռք բերելու իրեն նախկինում անհայտ նոր գիտելիքներ կամ արդեն ձեռք բերված գիտելիքների շրջանակը խորացնելու և ընդլայնելու համար:

Օգտագործված գրականություն

- Ընթերցանությունը տարրական դպրոցում, Մեթոդական ուղեցույց, ԿԶՆԱԿ, 2021թ։
- . Ս.Խաչատրյան Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014:
- Ինչպես պլանավորել Մայրենիի դասը, Կ.Թորոսյան, Զանգակ, Երևան, 2016թ
- 1. EduArmenia-ի «Արդյունավետ դասավանդման և ուսումնառության դասընթաց», ԱՄՆ-ի Բոստոնի համալսարանի ուսուցիչների վերապատրաստման ծրագրի պատասխանատու Վիգի Խրլոբեան: